


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ

Նամակ կամ որևէ գրութիւն պէտք է ուղղել աս Տեղիւն ԱՐՇԱՒՈՅՍ քաղաքի ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	
Տարեկան քոյր դակիլեւ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ	
Տարեկան Ծրակ	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
Direc.-prop. du journal arménien
ARCHAËOÛYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԳԱՆՈՒԿ Եւ թղթատարի ծախքը, հոկտեմբերեան վրայ է:

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք ևս չ'են տրուիր

ԱԶԳԱՅԻՆ ԹԻՒՆԻՐ Կանխիկ վճարելի են

ԿԱՅՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ ՈՐ ԿԸ ՓԼԶԻ

Պ. Մրեւան Լօզան, հոշակաւոր գրիչը, հետեւեայ գուշակութիւնները կ'ընէ Աւստրո-Հունգարական կայսրութեան վախճանին վրայ, զոր վեր ընթերցողաց ներկայացնելը շանտիանութեան գործի չեմք ներկայանէ:

Ճշմարտապէս ողբերգական հետաքրքրութեան տեսարան մըն է այն, որ այս պահուստ մեզ կը ներկայացնէ Աւստրիական խարխաւած կայսրութիւնը:

Ամեն կողմէ թագաւորութեանց, դրքաւորութեանց, նահանգներու, գաւառներու մօզակները կը ճախրուին, կը հերձուտին, իրարու վրայ խճուղուած ցեղեր, ազգաբնակիցներ, իրարու կը բազմին, ազգեր իրարմէ կ'անջատուին, գահը տակաւ առ տակաւ կը դողդոջէ...: Երբեմն, երբեմն սարսուռի ճարձատիւն մը կ'արձագանգէ որ ամբողջ հին աշխարհը իր հիմանցը վրայ կը դրողեցնէ: Եւրոպան այն ատեն, սարսուռով կը բարձրացնէ իր գլուխը շայն դիտելու: Կ'զգայ մեծ աղէտներու մօտալուտ հովիտ իր վրայէն անցնելը: Կը դողայ պահ մը, բայց շուտով աչքերը անդին կը դարձնէ, ինչպէս որ կ'ընեն մեռեալին անցնելէն յետոյ, և նորէն կ'սկսին սնտոկքով մը զբաղել:

Իրտէ տակայն որ ահաւոր վտանգը իրեն կ'սպառնայ բաւական ժամանակէ ի վեր, ալէն ձախէն իրեն կը խօսին, իրեն կը բացատրեն, բայց լաւ մը զգացնելու համար իրեն բաւական չ'պիտի պօռան: Լաւագոյն պիտի ըլլար, որ ամեն օր, ամեն ժամ զայն ստիպէին ծանուցուող աղէտը դիտելու: պէտք պիտի ըլլար որ աշխարհիս ամենամեծ աղբուկներն իսկ զայն չ'արգիլէին երբէք ընդհանուր հալման փոքրիկ կրճուսներ լսելու: պէտք պիտի ըլլար որ անդամալար իր մտքին առջև ունենար այդ կայսրութեան ուրուականը որ մեծ շառաւժմամբ կը կործանի:

1889 ի Յունուարի 30 ին էր որ Մէյերլինկի ատրճանակի հարուածը ծանոյց արդէն, որ այդ մօտալուտ աղէտը անխոքսափելի էր:

Այդ օրը Պիլմարք իշխանին — որ Քրեւորիխարուհ էր — իմացուցին թէ Յրան-

սուա ժողով կայսեր միակ որդին և կայսրութեան ժառանգ Սիւսուլֆ արհիդուքսը անձնատարան եղած էր:

Երկաթեայ նախարարապետը, սոսկալի յիշոց մը արձակելով իր կեռած և թաւախերուն տակէն, կամացուկ մը ըսած էր:

« Աստուծոյ մը պէտք պիտի ըլլար այդ մեքենան քաշեցնելու համար. և ընդհուպ մարդ մը իսկ չ'պիտի գտնուի... »:

Այո՛, թիչ ատենէն մարդ մը իսկ չը պիտի մնայ, վերջին միակ պատնէշը որ կ'արգիլէ կատաղի ալիքները փոսած նաւուն մէջ թափանցելէ, վերջին գերանը որ խարխուլ ու ճախրած տունը կը բռնէ, այդ Յրանուա ժողով կայսրն է, որ այսօր 71 տարեկան է և որ աշխարհիս տեսարանին վրայ, ուր այնչափ խառնակներ, այնչափ գաճաճներ, այնչափ հսկաներ, կ'անցնին կը դառնան կարծես հին ողբ գաւթեանց ճակատագրի մարմնացումը եղած է:

Ըսէ՛ք, խորհած էք արդեօք երբեմն այդ մարդուն խորհրդաւոր, անողբ, խրոտվայոյզ ու տագնապալից ճակատագրին վրայ: Իհարէ բարձրացած է ահագին փոթորիկ մը շառաւիղ և ցնցոյցն միջոցին: Յաջորդաբար ճիշտ սրտին ընդունած է այն երեք գաշտիկ հարուածները որ Մաճէնթա, Սօլֆերինօ և Սատովա կը կոչուին, կատաղութեան դոռում գոչումով ստորագրած է այն Իրակի գաշտիկը, որ յաւիտեանս իր քունքէն կը խլէր գերմանական կայսրութեան թագը, իր ներքեւը ըզգացած է իր դարաւոր կայսրութեան դողդալը: Տիտուր միայնակութեանը մէջ իսկ որ կարծես արդէն անապատի մը վերածած է իր ընտանեկան յարկը: տեսած է նա իր միակ որդւոյն, իր գահաժողովուն, իր կայսրութեան միայն յոյժին անձնատարան իրենքը: Երբեմն է իր եղբոր գեղակահար տապալիւր, իր կնոյր սպանութիւնը, իր եղբորորդիներուն այդպէս մեծիւր...:

Վասնզի աւագ, պէտք է լսել որ այդ երկու իշխանազոյճները որոնց մին Յրանուա Ֆէրդինանտ կը կոչուի, ինք միւսը Օթթօն, երկրին արքէն բաշխուղան աղէտքներուն պղտիկ մասը չեն կազմեր, դատեցէ՛ք եթէ կ'ուզէք:

Յրանուա Ֆէրդինանտ արհիդուքսը այսօր 38 տարեկան է, ինչպէս որ գիտէք քանի մը ամիս կայ ձախճեռնեայ (morganatique) պիտուութիւնը մը կնքած է պալատական կնոջ մը, Օթթէք կոմսուհին հետ: Վիէննայի մէջ ո՛չ բարեկամ ունի և ո՛չ ալ բարեկամուհի, մեռակեաց ու լուսկեաց անձ մըն է, Հապսպուրկներու յաժուկ երկար

ստեղծոյն դէմքով: Հանդարտ, ալքր լազոտ, բերանը առանց արապայտութեան, քալուածքը յոգնած բան մը ունի կարծես իր մէջ. կ'որոտայ, ձի կը հեծնուի, կրնայ four in hand մը առաջնորդել և բոլոր գիտցածն ալ այս է:

Արդի իշխաններուն գրեթէ ամենաորդէան է, գերմաներէն հաղիւ հազ կրնայ անսխալ գրել. ֆրանսերէն չ'կրնայ ճիշտ գրել և Աւստրիական հողին վրայ խօսուող լեզուները մեծ մասամբ չ'գիտեր: 18 տարեկանին երբ չափահաս եղաւ և դասատուները իրմէն հրածեշտ առին, իր բոլոր գրքերը այրեց և երգում րբաւ ոք վէյ մըն ալ ո՛ր է գիրք չ'պիտի բանայ. կ'ըսեն թէ իշխանը իր երգումը պահած է քան:

(Շարունակելի) Լ.

ԱՊՐԱՊՈՒՄԱԶԱՆ

ՄԻՍ ԹԷ ՊՏՈՒՂ

Մարդը, որ արտաքին պաշտօն ձգտողն ու ծաղիկեցող էրբեմն թէքն ու պաշտօնաւորը իր թեւեւ պողպակեւր է եւ թէ խելչպէն կ'ապիկը, որ զարմանաբար արարչագործութեան փորհորաւոր սանտուխին վրայ՝ ծխաղբուն ամենամօտ գրացին ըլլալու առանձնաշնորհումը կը վայելէ, իր անգամագիտական մտայնար յօրինուածով: Մարդուն ակամները մարտդական գործարանները, կազմական բոլոր գրութեանց ձեւերն ու պաշտօնները պողպակեւր մը ունեցածներէն չեն տարբերիր ըսաւ: Մեր երեսուներկու ակամներուն մէջ վաշիլյօրէն գաստուրուող նախատարրական չորս հերձատումներն որ մասակը ծնած ըլլալին զը միայն ին հաստատեր, այլ անհերքելի փաստ մըն ալ չեն կրնար նկատուիլ քմայաշտներու այս քմահաճ դատը պաշտպանելու նկրտող աններուն համար: Կապիկը մարդէն աւելի զարգացած հերձատումներն ունի, սակայն, այսու հանդերձ, միմիայն ընկուղով, կազինով, պտուղներով ու հատեղէններով կը սնանի. և իր հերձատումները կանոնք կտարելու և կեղեկու համար եւեթ կը դործածէ:

Մարդիկ փորձեցին կապիկը մսակերութեան վարժեցնել, Այս գաղտնային, անբնական կենցաղավարութիւնը շատեց խեղճ անասունին ջղային փափուկ զրութիւնը, և զրկեց զայն իր ճակատիկ շարժումներէն. աւելի գանդաղ և դաւ դիւրաշարժութեան ախպար ճանչցուող եռանդուն անասունը, հեռզնալէ զայրօցաւ, և հիւանդագին երեւոյթ մը ամենկողմէն իր իր կորովի ու արթնութեամբ իրարմէն:

Մարդը, իմացական պերագան կարողութեամբ օժտուած և գործարանային նուրբ հիւսուածներով կազմուած գերազանց արարածը՝ ոչ խոտակերներու կրկար, կնչոտ ու բազմաման-

ուած աղիքն ունի, ոչ ալ մասկերներուն պարկածե ստամոքքը, խոշոր լեարդն ու կարծ աղիքը: Լեարդի անհաշուելի հիւանդութիւններուն, եւ այժմու ստամոքքներու 92 առ 100 ընդլայնումներուն դեռ խրթին ու անթափանցելի խորհուրդ նկատուող գաղտնիաց բանալին ու լուծուածը այս յիշատակուած քանի մը տողերուն մէջ կրնայ գտնել մտացի ընթերցողը: Յօրինուած այն այս ուշադրաւ դանազանութիւնները կ'ապացուցանեն թէ՛ մարդը կատարելագոյն պտղակեր ծնած է, եւ զոր՝ բանաւորապէս կ'ապացուցանեն բոլոր նշանաւոր անգամագէտներն ու բնախօսները:

Բնալուծական տեսակէտով, յօրինուած ին մաշած մասերը նորոգելու համար միայն բուսական սնունդներն են՝ որ անհրկայօրէն կը մատակարարեն պէտք եղած անմիջական տարրերը, եւ որք, մարդուն համար, աւելի դիւրամարտները, հեշտօրէն իւրացուողները, ա՛մէն տեսակէտով նուազ փնտասկարները, եւ շերմութիւն ու զօրութիւն հայթայթելու համար ալ գերազատ համարուողներն են:

Միւսը իւրացնելի մասնաւոր տարրեր մը չ'ունի, զոր անկարելի ըլլայ ձեռք բերել բուսական դասակարգէն: Թերի ու անկատար սընուոգ մըն է, ինչու որ ոչ չաքար եւ ոչ ալ նշայ (amidon) կը պարունակէ, որք՝ մարդուն կազմութեան բերմամբ, ստանալիք կերակուրներուն ամենատաատ ու կարեւորագոյն մասունքը կազմելու են: Ընդդէմներն, արմախքներն ու պտուղները այս անմիջական տարրերը պէտք եղած չաղաղութեամբ կը պարունակեն, եւ բաց աստի, անոցմէ ոմանք համեմատապէս մտէն աւելի բարակածեաւոր շարերներ (principes azotés) ունին իրենց մէջ: Լիպէիլ եւ այլոց բնալուծական աշխատութիւնները՝ բուսական ու կենդանական սպիտիկներն (albumines) մէջ բնաւ տարբերութիւն մը չ'կենալը, գիտականապէս հաստատեցին:

Ամենէն հետաքրքրաշարժ իրողութիւններէն մէկը՝ զոր բնախօսութիւնը փոխ առաւ բընալուծութենէն, կենդանական հիւսուածներուն կազմութեան մէջ մտնող բոլոր տարրերը բուսականներու մէջ արդէն գոյութիւն ունեցած ըլլալուն հաստատուին է: Տունկին մէջ չաքար, նշայ, ճարպ, սպիտ ու նեարդիա (fibrine) (1) գտնելէ վերջ, խոտակերներու օրակապիկն կազմող մարմնոյ քանակութիւնը բաղդատուեցաւ կազմութեան հիւսուածներուն մէջ շնորհ կամ կուտակուող տարրեց քանակութեան հետ: Այս գիտական քաղցրաստիքներն յառաջ եկաւ յետագայ անուր հետեւութիւնը թէ՛ անասունը գործարանաւոր տարրեր չ'ստեղծեր:

եթէ խոտակեր է, ուղղակի, իսկ եթէ մասկեր է, անուղղակի կերպով կ'ստանայ զայն բուսական դասակարգէն: Սակայն եւ այնպէս, արդի անդադրում խուզարկութիւնները նպատեցին երեւան հանուլ կենդանիներուն մէկ հիւանալի կարողութեան հրաշալի գաղտնիքը, այն է, իրենց պիտոյից համեմատ, ստացուած սնունդով ուրիշ մը կազմել, եւ, օրինակի համար, նըշայը իւղի, կամ նեարդիա շաքարի փոխակերպել: Բայց, դժուար չեղաւ նաեւ սպացուցանելու թէ բուսականը սոսկ ատակէ կազմելու գործարանաւոր սնունդական մասնիկը, որ՝ կենդանականը բարեփոխելու կամ ջնջելու եւեթ կարող է, այնպէս որ բուսական կերակուրները գերազանց սնունդները կը կազմեն մարդուն, եւ կենդանականները ուրիշ բան չեն, բայց եթէ անհամ ու անախորժ անասնոց: Հետեւաբար պտուղ, եւ ոչ թէ միս, ըլլալու է քու կերակուրը, սիրելի ընթերցող:

Գիտե՛մ որ այսքանով գո՛հ չ'պիտի մնաս անդական այս կարեւոր ու անհրաժեշտ հարցի մասին, սակայն հող մի՛ ըներ, կը խոտանամ աւելի երկար անսնունդ յաջողուի:

Կ. ՌԱԶՈՒՆԱՆ
Գահիրէ 2 Ապրիլ 1901

(1) Նեարդներու եւ շերտներու քաղցրութեան մեծագոյն մասը կազմող սպիտակ, անհամ, կախող եւ առանձնական մասնիկ մը:

ՍՈՒՐԵ ԳՐԵՆԸ

Եթէ Սուրբ Գիրքը չ'ըլլար, Շատո՛նց դարձեր էի հող... Տերեւ մ'է ան՝ կեանք տուող, Կենաց ծառէն մի՛շտ դաւար:

Շուրջն՝ անկումներ, գանկիս յա՛ր, Պոհէ՛ր տային սե՛ւ, մաշո՛ղ... Եթէ Սուրբ Գիրքը չ'ըլլար, Շատո՛նց դարձեր էի հող...:

Մարդկային ո՛ր մէկ հանձար, Պիտի կրնար՝ ընթերցող, Սըրբելով մեր աչաց ց'օղ, Յոյ՛ց տալ մեզ մեր անկման ճա՛ր, Եթէ Սուրբ Գիրքը չ'ըլլար:

ՉԳՂԻԿ

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Փարիզ 3 Ապրիլ. — Պ. Տէլքասէ ամսոյս 20 ին Բէթէրպուրկ պիտի երթայ: Փարիզ 3 Ապրիլ. Պ. Տը Լանէսան հրաման տուած է 20 հաս ընդծովեայ նաւ շինելու:

Վիէննա 3 Ապրիլ. — Հոս մանրամասնութիւններ կը հրատարակեն Ս. Բէթէրպուրկի մէջ պատահած նոր խուղութեանց վրայ: 35 հոգի գլխաւորաբար ուսանող, Մարտի 24 ին փողոցներու մէջ սպաննուած են և երկու շատ ծանօթ Բրօթէսօրներ ալ ձերբակալուած են:

Թուրքիոյ 3 Ապրիլ. — Ռուս զրահաւորները որք նաւահանգիստը կը գտնուին՝ հըրման ստացած են Խտալական նաւատորմի չորս հասնելուն մեկնել Ռուսիոն: Ս. Բէթէրպուրկի կառավարութեան այս որոշումը շատ կը քննադատուի:

Բրէթօրիա 4 Ապրիլ. — Յայտնուած է որ Պէլքասթի Պօէրները դատած և հրացանի բռնած ին Փեարուար 27 են Պ. Տը Բօքը որ խաղաղութեան դատարանի կողմէ իւր բանագնաց զրկուած էր:

ՎՐԻՊԱԿ

Մեր նախորդ թուոյն խմբագրական յօդուածին մէջ մէկ քանի սխալներ սրւարդած էին որոնք հետեւեալներն են.

Սխալ Ուղիղ հաւանիս յեմ գտնէր միա կիտ չեմ գտնէր երրայական քորքիս երիտասարդ թուրքիա Մնաքօյի ծրանս Անաթօլ ծրանս

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Տ. Մ. ՉՐԱՔԱՆ. — Աւրախութեամբ կը տեղեկանանք թէ մեր Աղեքսանդրիաբնակ ազգայիններէն Տիար Միհրան Չրաքեան կարեւոր պաշտօնի մը կոչուած է Հանս

— Ինչո՞ւ մարդս, ըսաւ Արաքսի, ո՞վ գիտէ ինչե՛ր քաշեցիր:

— Իրաւունք ունիս, Արաքսի, այսքան տարի է ծովու վրայ եմ, այսպիսի օր մը չ'եմ յիշեր:

— Անցուկը մոռցուկ կ'ըլլայ կ'ըսեն:

— Ան ալ ճիշտ է. ինչեւիցէ, ուսկանք բըզիկ բզիկ եղաւ, կորսուեցաւ. նաւակս քիչ մը խորտակուեցաւ, եւ ես հողի. աղտոեցայ:

— Այս բաներէն ետքը գարձեալ եւ միշտ խնդում երես ես, հէ՛:

— Ինչո՞ւ չ'է. բարկանալով ի՞նչ պիտի շտհիմ, Իրաւ է որ հիմա մեր կացութիւնն աւելի ծանրացաւ, եւ պէտք պիտի ըլլայ որ ուսկան մը ճարելու եւ նաւակը նորոգելու համար քանի մը շարաթ աւելի խեղճօրէն ապրինք, բայց Աստուած սղորմած է: Հոս ի՞նչ կայ չ'կայ, պատմէ՛ նայիմ. դուն ինչպէս ես, աղաքները ի՞նչպէս են:

— Փառք Տիրոջ, ամենքնիս ալ աղէկ ենք: Թագուհի եւ Արշակ ալ չ'պիտի կրնան դպրոց երթալ:

— Ինչո՞ւ.

— Վարժապետը ըսեր է որ եթէ վաղը ամսական չ'բերէք, ալ մի գաք:

— Քանի՞ ամսական պարտք ունինք:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՐՁՈՒԿՆԵՐԸ

— ԳՕԳ —

Հովը կը փչեր զայրապին, եւ խեղճուկ հիւղակը հիմէն կը ցնցէր: Ազատ լոյս մը կը պլուպլար հոն, եւ մթութեան հետ կը մրցէր նշմարելի ընելու համար գէմքը կնոջ մը, որ գլուխը ձեռքը մէջ առած սուղուած էր իր խորհուրդներուն մէջ, ականջ գնելով շատ սուղուններուն կատարի ալաց, որոնք հեռուէն կը սուրային բազմալի եւ քամիներէն սուղուններով փչրուելի ծովափի մայրերուն գէմ: Ահեղագոյն որոտմունք կը զղրդէին հողագունստ կարծես, զոր պէպ յանձանօթ պիտի քչլր տանէր ջրհեղեղեան անձրեւի մը ծովացեալ ջուրը իր յորձանուա ընթացքին մէջ: Ամպաներձ բարկածայթ շանթ մը շարագուշակ եւ անդոյն լոյսով մը կ'ողողէր երբեմն այդ վրդովեալ բնութիւնը:

Յանկարծ դուռը բացուեցաւ եւ մարդ մը ներս մտաւ՝ աղբիւրացեալ:

— Բար՛իբիկուն, կնիկ, զոչեց զուարթաձայն:

— Ա՛հ, գու՞ն ես, Յակոբիկ, սիրելիս: փառք Աստուծոյ, հեկեկաց կիւնը, եւ ոտք ելլելով լազից փարիլ ամուսնոյն պարանոցը:

— Կամաց, Արաքսի, ըսաւ մարդը ծիծաղեալով:

լով, հեռու կեցիր. եթէ ոչ ջուրէն կը խեղճուէիս:

Բայց նէ կը հեծկւար, կը համբուրէր, եւ կը մրմար:

— Փառք Աստուծոյ, ո՛հ, այս ի՛նչ օդ է. սիրտս ա՛ն ու գողի մէջ էր. հեղի ողջ առողջ ես, հողիս. հոս ասանկ. հապա ծովուն վրայ ի՞նչ պէս է. Տղաքները կերցուցի. քնացուցի. ես ալ հոս նստած քեզի կը մտածէի, կ'աղօթէի...:

— Ինձի նայէ, Արաքսի, ըսաւ Յակոբիկ՝ կիւնն ընդմիջելով. իմ ջուրէս բաւական թըրջուեցար. կեցիր, զգեստդ փոխեմ. եւ որովհետեւ յոգնած ալ ես, քեզ նստեցնեմ, յետոյ խօսինք. ի՛նչպէս կ'ըլլայ, սիրականս:

— Վա՛յ գլխուս, գոչեց Արաքսի, ես ալ կեցեր պարապ խօսքեր կ'ընեմ. այս անգամ ալ սղուար դաս մը տուիք ինձի Յակոբիկ. եւ իսկոյն փոխեց իր ամուսնոյն ջրաթաթախ զգեստը:

— Հա՛, ըրաւ Յակոբիկ, հիմա խօսինք:

— Այո՛, սեղանին վրայ, պատասխանեց Արաքսի:

Տաքուկ ապուր եւ տապկած ձուկ կամ նոյն իսկ չոր հաց, երբ համեմուած են փոխադարձ սերով, եւ անվրդով զուարթարարութեամբ աւելի համեղ են եւ աւելի սննդարար քան ամենաճիւս սեղանը, որուն կը նախագահէ շահասիրական մտահոգութիւն՝ անդամակցութեամբ ամուսնական անտարբերութեան եւ այլեւայլ խղճի տագնապներու:

բողոքում շինութեանց նախարարութեան Yilles et Batiments ի ճիւղին մէջ :

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները :

ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ՄԸ . — Տիար Յ . Ալ- փիար որ ամբողջ Մարտ ամիսը նոր Օրի Խմբագրութիւնը կը վարէր, երկտողիւ մը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ՛ ներկայ Ապրիլ ամսոյ 1 էն սկսեալ ո՛ր է է կապ չ'ունի յիշեալ թերթի անօրինութեան հետ :

ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ


Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերու- թեան Պատ . Գործ . Ժողովոյ Գիւտնէն հե- տեւեալ նամակն ստացած ենք ի հրատարա- կութիւն :

Պատ . Տնօրինութիւն « Արշալոյս »

Ազգագրութեան Լրագրի

Աստ

Կը խնդրենք որ հաճիք հրատարակել հետեւեալը ի գիտութիւն Յարգոյ ազգայնոց :



Մեծ . Տեար Մելիք Ս . Գալիթ Բէկի Արաբկիրու ընդհանուր սրտոց և թշուառ- ներուն ի նպաստ, ընկերութեանս Տնօրի- նութեան յանձնած 400 օրենակ ԼՈՒՍԻՆ- ԵԱՆԻ անուն հատընտիր գրքոյկներու սպա- ռումին ցարդ գանձուած գրամէն թերհաշիւ 23 օսմ . ոսկի Արաբկիրի Առաջնորդ Գեր . Մուշեղ Մ . Վարդապետ Սերովբեանի զըր- կուած, և նորին Սրբազնութիւնէն տարուոյս 24 փետրուար և 581 համար եկած պաշ- տօնագրոյն համաձայն յիշեալ գումարի բաշ- խումը կատարուած է հետեւեալ եղանա- կաւ :

- 5 Օսմ . ոսկի Ազգային որբանոցին (Ա- րաբկիրու)
 - 5 » » Որբ աղջկանց դաստիարա- կութեան
 - 3 » » Չքաւոր աղայոց դպրոցական պիտոյից
 - 10 » » Աղքատաց (աղքատախնամի յանձնաժողովին ձեռամբ)
- Համագումար 23 օսմ . ոսկի :

- Երէկ հացագործը եկաւ :
- Անտր ալ պարտք ունինք :
- Ո՛ր, այսինքն ամիս մը միայն : Բայց ու- րովհետեւ ամեն ամսու գլուխ վարժուած էր քեզ իր խառութը տեսնել վճարման համար, երէկ եկաւ հարցնելու թէ արդեօք հիւանդ ես որ այս անգամ չ'ազգիր :
- Ի՞նչ պատասխան տուիր .
- Ասի որ ծովու վրայ ես, այսօր վաղը կուգաս :
- Լաւ, ուրի՛շ :
- Ուրի՛շ ոչինչ :
- Արտաշէս, Վաղարշակ, Ս սթենիկ ի՞նչ պէս են :
- Աղէկ են . առտուրնէ մինչեւ իրիկուն կը կաողին, յետոյ մեծելի պէս կ'իջնան կը քնա- նան :
- Բնականաբար, ուրի՛շ ի՞նչ կուզես որ ընեն իրենց տարիքին :
- Գիտես ես ի՞նչ կը խորհիմ :
- Հստ՛ որ գիտնամ :
- Կը խորհիմ որ սա վարժապետը միտակ մեր զաւակներուն համար չ'է բացած դպրոցը, եւ մասնաւորապէս անոնց համար քան մը չը ծախսեր, յիտունէն աւելի աշակերտներ ունի, որոնք կանոնաւոր կերպով կը վճարեն, քանի որ հարուստի զաւակներ են . հետեւաբար իր սպորուստը մտածելու վիճակին մէջ չ'է : Այս պարագային միթէ աւելի աղէկ չ'է՞ր ըներ քիչ

Այս առթիւ կը խնդրենք այն ամեն Ազգայիններէ որ եթէ յիշեալ գրքոյկներէն ստացած և ցարդ վճարելու պատահութիւ- նը ունեցած չ'են, հաճին դիմել անոնց փո- խարէնը ստորագրելոցս հասցէին, որպէսզի ժամ յառաջ դրկուի իր նպատակին :

Նմանապէս հարկ կը համարենք յայտ- նել նաև թէ Ընկերութեանս անուակը հե- տեւեալ նուէրներն ստացած է :

Աշուտափայլ Տիկնայք

Աշուտհի Գ . Եագուպեան	97 , 50
Եւզինէ Ա . Եագուպեան	77 , 15
Մարի Ա . Պետրոսեան	38 , 50

Տիկին Բ . Չ . Գ . նուիրած է 1 ա- պարանջան ոսկեզօծ . 1 ապարանջան ճեր- մակ . 1 միտալինոն չլթայով ոսկեզօծ . և Օրիորդ Մարի Մ . Թէրզեան նուիրած է մետաքսեայ բարձի երես մը, վրան սիրա- մարդ մը շքեղօրէն բանուած . այս վերջին չորս կտոր առարկաները, ի նպաստ որբոց վիճակահանութեան պիտի դրուին յառա- ջիկային, բարեսէր տիկնանց կողմէ հետզ- հետէ նուիրուելիք ձեռագործներու հետ :

Ի Գիւտնայ Գործ . Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան

Գանձապետ Ատենայպետ Կ . ԵՐՉԻԿԱՅԵԱՆ Ա . Մ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԹՈՒՐԻՒ ՄԸ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սայիտ Պէյ էլ Շամի, պաշտօնեայ Մա- յէի Սանիյէի մէջ, թուրք սպասաւոր մը ունի եղեր, որ ճամբու դրած է իր գէշ վարքին պատճառաւ : Այս վերջինը մահա- ցու առեւտրիւն մը կը սնուցանէ իր հին տիրոջը հանդէպ և առեւտրէ մը ի վեր ամեն միջոց կը փնտռէ անոր վնաս հասցնելու և կամ ձանձրոյթ պատճառելու :

Անցեալ օրեր ի բացակայութեան գըռ- նապանին, թուրքը Սայիտ պէյին տունը կը մտնայ որ Տահէրի սպանդանոցին մօտ կը գտնուի, և գաղտագողի կերպով սան- զուխներէն վեր կ'ելլէ, բնականաբար ամի- նադէշ գիտաւորութիւններով վառուած . բայց մեկէն ի մեկ ինքզինքը իբէն տեղը անցնող ծառային առջևը կը գտնէ . վեր- ջինը կը հարցափորձէ ինքնակոչ հիւրը և

մը համբերել մեր զաւակներուն ամսականնե- րուն համար, փոխանակ զանոնք վճարելու :

— Անշուշտ աւելի աղէկ կ'ընէր, բայց ա- մեն մարդ իր գործին տէրն է . եւ մեզք չ'պատ- կանիր ուրիշները գասել : Այն մարդը միշտ ի- բուռունք ունի պահանջելու գումար մը, զոր ի- րեն կը պարտինք, եւ զոր պէտք է վճարել : Այսուհանդերձ վստահ ես որ հարուստները աղ- քատէն աւելի ճշտապահ են այսպիսի վճարում- ներու մէջ :

— Կարծեմ . բայց մինչեւ որ կարող ըլլանք վճարելու աղաքը ի՞նչ պիտի ըլլան .

— Թագուհին քովդ կը մնայ և կ'զբաղի սան գործերուն հետ, ապագային օգտուելու հա- մար . Արշակն ալ արհեստաւորի մը քով կը գը- նեմ, որպէսզի ան ալ յետոյ ձեռքը դրամագը- լուխ մ'ունենայ :

— Լաւ, ի՞նչպէս կ'ուզես անանկ ըրէ : Հա՛, միտքս եկաւ . մեր դրացի Աննա տուտուն երէկ մեռաւ, և իր երկու պատիկները անտէր անօք մնացին :

— Կեղծերը, հառաչեց Յակոբիկ, և լռեց :

— Սակայն ի՞նչ պիտի ըլլան այն մանուկ- ներ, փոքրաց պահ մը հաքը՛ խոնուն . ժամա- նակները շատ գէշ են . հացը դիւրաւ չ'վատկ- ուիր . քեզի բան մը ըսեմ, Արաքսի, այն եր- կու պատիկները մեր հինգ պատիկներուն հետ

կ'ուզէ՛ գիտնալ թէ ի՞նչ ընելու եկած էր հոս . « ու՛ր է տէրդ կը հարցնէ » անոր թուրքը . սպասուալից շեշտով մը՝ միևնոյն ստեն հանդարտ երեւել կեղծեալով, բայց կատաղութիւնը իր աչքերուն մէջ կը կար- դացուէր :

— Տէրս հոս չ'է, կը պատասխանէ ծա- ոան — և անմիջապէս կ'ըմբռնէ թէ՛ անա- խորժ հիւրը բարի նպատակաւ եկած ըլլա- լու չէր . և դուն հոս գործ չունիս . « չու- տով սակէ դուրս ելիր » կ'ըսէ :

— Ձե՛ս ուղեր տիրա՛յդ ուր ըլլալը ը- սել հէ՛ — կը հեգնէ թուրքը, և կը ջանաս զայն պաշտպանել . աղէկ . ա՛ռ ուրեմն . . . » և այս բանով, գանակ մը կը հանէ և կը միտ գծադր ծառային փորը . ծառան ա- րիւնաշաղախ դետինը կը թաւալի, բարձր աղաղակներ արձակելով :

Տան միւս ծառաները կը հասնին և կը ջանան մարդասպանը ձերբակալել . բայց սա նորէն գանակ կը խաղցնէ և երկու մարդ- կը վիրաւորէ, որոնց միոյն մատը կը կտրէ և այսպէսով կը յաջողի փախչիլ : Տունէն դուրս ելլելուն պէս արիւնտառ զանակը մօտակայ պարտէզի մը մէջ կը նետէ և կ'ա- նեւեւեւեւանայ : Բայց այս բոլոր միջոցին, հազգին իրարանցում մը կը տիրէ թաղին մէջ և չուտով ոճրագործը կը ձերբակալ- ուի : Ոստիկանատնէն անմիջապէս սպայ մը և առողջապահական բժիշկ մը կը զրկեն սօճին վայրը քանի մը զինուորով : Մարդաս- պանը չլթայակապ բանտարկուած է թէև բայց վիրաւորեալին վիճակը խիստ ծանր է կ'ըսուի :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԻՏԱԼԻԱ

Հռոմի թրքական դեսպանատան զին- ւորական կցորդ Ահմէտ պէյ Իփիթ, որ հիմակուան Վէզիրին տղան է, իր հրաժա- րականը տուած է անձնական խնդիրներու պատճառաւ : Կ'ըսուի թէ Ահմէտ պէյ չ'ը- ումէն նաքօյի պիտի մեկնի և անկէց Չը- ուիցերիա պիտի անցնի :

Հռոմի նոր զինւորական կցորդը Յարիզ պէյ Արիֆը պիտի ըլլայ :

ԹՈՒՐԻՒԱ

Փարիզեան Le Libéral Ottoman թեր- թին խմբագիր — Տնօրէնը, Խոմայիլ Գէմալ պէյ, որ Միթհատ Փաշային թուան է և ե- րիտասարդ թուրքերու կուսակցութեան կը

խոնոնենք ի՞նչպէս կ'ըլլայ ի Կոթը թիւր նա- խախնամական թիւ մ'է կ'ըսեն :

Արաքսի իր ամուսնոյն կը նայէր ուրա- խայի եւ թրջուած աչքերով :

— Մենք ալ շարայ սրեց Յակոբիկ՝ վստահ ձայնով մը . քիչ մը գլխէն կը կտրենք, քիչ մ'ալ պոչէն կը կտրենք . քիչ մ'աւելի կը յոգ- նինք եւ այն երկու պղտիկներն ալ կը մեծոքը- նենք մերիններուն հետ : Ո՛ւր են անոնք հիմայ :

Արաքսի առանց պատասխանելու՝ ամուս- նոյն ձեռքէն բռնեց և սարսե խրճիթին խորը հոն վերցուց վարագոյր մը, որուն ետեւ Յակո- բիկ տեսաւ Կոթը խառնեալ գլուխներ, իրենց անդորրուէտ գէմքերով, որոնք իրենց քունին մէջ կը ժպտէին հրեշտականման :

Եւ այր ու կին գրկախառնուեցան :

Հովը զայրուիլն կը փչէր, լեռնամբարձ կո- հակները կը փչրուէին ժայռերուն գէմ անեղա- մուռնչ, շանթեր շարագուշակ լոյսերով մերթ կ'ողողէին քնաթաթաւ աշխարհը, անապատը- զորը որոտումնք ի հիմանց կը խախտէին հի- նաւուրց երկրագունդը և Աստուծոյ օրհնութիւ- նը թեւատարած կը հոլանար այդ խեղճուկ հիւ- ղակին վրայ, իրրու արծիւ իր բոյնին վրայ :

Ա . ՊԱԼԵԱՆ

պատկանի, իր բացակայութեան դատապարտուած է ցկեանս բանտարկութեան:

ՍԻՐԻՍԻ

Մարտ 15 ին Պէնկագի մէջ Իտալական նամակատունին բացման հանդէսը տեղի ունեցած է. երեք Իտալական զրահաւորներ Տանտօլօ, Մօրօլինի և Բարթէնօրէ, ներկայ եղած են կատարուած հանդէսներուն ՍԻՐԻՍԻ:

Կազակէն 400 նոր զօրքեր մեկնած են Եւմէնի զօրաբանակին միանալու համար: ՕՐՍՆԺ

Օրանժի արևելեան կողմը բազմաթիւ Պօէր գօմանտօներ անդադար չարժման մէջ են:

ԳԱՐ

Նաաբօրթէն կիմացնեն թէ՛ կիրակի օրը կռիւ մը տեղի ունեցեր է Շօմպրի և Գօլէսպէրի միջև գտնուող Հէնիկֆօնթայն ավանին մէջ: Անգղիացի տեղակալ մը ըստ պաննուած և երեք հոգի վիրաւորուած են:

Տը Ուէթ 400 հայդուկներով Վաալէն անցած է տը Վիլլիէրտօրթի մօտ որ Սթանտէրթընէն 35 մղոն անդին կը գտնուի. կ'սպասուի որ բազմաթիւ Թրանսվալցիներ անոր գունդին միանան:

Հրամանատար Պրից և իր գօմանտօն Պլաս-Բօքէն մեկնած են Սուազիները պատժելու համար, որոնք վերջին կուտի մը մէջ մէկ քանի պօէրներ սպաննած էին:

Միւս կողմէն ժամանակ կը տեղեկագրեն թէ 400 հոգիէ բաղկացած պօէր շոկատ մը Միտտէլպուրկի վրայ կը քալէ:

Բազմաթիւ պօէրներ կը գտնուին Թարքա և Սըմըրսէթ նահանգներուն մէջ:

Միւս կողմէն կը ծանուցանեն թէ ժամատախար օրըստօրէ կը ծանրանայ. սպիտակ ժողովրդեան մէջ ժանտախտի դէպքերու համեմատութիւնը կը շատնայ:

Սիմսթաունի մէջ զինուոր մը ժանտախտէ բռնուած է, նմանապէս երկու դէպքեր պատահած են կրիմօսիսթի և Շամթօի մէջ:

Սիմսթաունի զինարանը աշխատող բըմիկ մը մեռած է:

8 ուրիշ դէպքեր պատահած են բընիկներու մէջ, 2 ալ ճերմակներուն մէջ:

Կնքապարտութիւնը ամեն միջոց կը գործածէ Մալայիցիներուն կրօնական նախապաշարմանց դէմ կռուելու համար, որք կրնազիմանան ժանտախտի դէմ ձեռք առնելու իր ջանքերուն: Եվ՛ ստանք շարունակեն ընդդիմութիւնը, կտապալտութիւնը բռնի պիտի գործադրէ ստուշապահական միջոցները:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Կալիթաէն ստացուած հեռագիր մը կ'ըսէ թէ անցեալ շաբաթ Հնդկաստանի մէջ 8000 հոգի մեռած են ժանտախտէ:

ՀՆԿԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱՍԹ 5 ԱՊՐԷԼ 1901

3125	9447	9184	9707	639	1600
8241	7698	9373	3696	1758	1162
9897	2137	7492	8008	7438	2388
9732	915	651	7479	8421	4437
	9805	3294	2949		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒԾՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
 ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԳՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրութեանը կը բաժնէ անհնէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրութեանը արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ արևելեան կերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԻՕՆԱՐ ընդհանուր ներկա, յաջուցիչ ի Գահիլէ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆՆԵՑ ՊԱՏՈՒԹՅԱԿ
 — ԳԷՈՐԳ ԵԿԱԻՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գահիլէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԻՐ Է երն են եւ ասոնցմէ մինչև ցարք 17,000,000 ծախուած է:


400 և աւելի վիտրիններով եւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ:

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄԻՅԱՆԱԿ
 Փարիզի 1900 ի Տիեզերական արձանատուներին մէջ ստացած է:

ՀԱՅՐԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՑ ԿԱՅԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ **ՀԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅԵՐԱԿԱՆ ԵՒ ԲԱԳՄԱՌՈՐԵԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ**
ՀԱՅՐԱՅԹԻՉ Ե. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏՆԵ

Կեղծերէն զգուշանալ, աշխարհութիւնը դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԻՐ ի յաշխակչիմ:

Գին ՉԱՓԱՌՈՐ



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԻՐ մեքենայից համար, յաճախորդաց տղաներուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն
 Փոխանակութիւններն ինքնաշխարհից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

G. DER AFRICANIAN
EGYPTIAN CIGARETTE MANUFACTORY
TRADE MARK
REGISTERED
MADE IN EGYPT
G. C. M. G. K. C. E.
GOVERNOR OF CAPE COLONY
and H.M.'s High Commissioner FOR SOUTH AFRICA

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՍՏԱԼՈՅՍԻՑԻ
 ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԶԻ ՍԿԶԲԸ
 Օսմանիյե ղեկարանին ղիսնացի փողոցի մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երջարտեալներ, Գիտեր, Հրատարակեր, Մանուագրեր, Տեղեկագրեր, Կանոնագրեր, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն:

1. ԲՆԱՇԵԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. Ե. Բ. պատկերներ:
2. ՈՐՐՈՒՆԻ սրոյ ի թուրքիա մուտքը ինչպէս կրուծի, արդիւրած է:
3. ՀԱՌԱՔԱՏՈՑ հայոց ժողովրդական երգերու: